պաճուած նկարներով եւ դիմանկարներով վարագոյրները թանկագին զարդեր էին:

Շաւշէտի, Արդանուչի մէջ կանգնած է Եալխանի լեռները, որոց հիւսիսային մասը Լեկտա եւ հարաւային կողմը Դոլիսխանայի լեռներ են կոչւում: Լեկտա լեռներից իջնում է Դաքանմերիկ առուն, որ ոռոգում է համանուն գեղը. Եալխան լ-ից իջնում է Դոլիսխան առուն, որ ոռոգում է Դոլիսխանա գեղը:

Ծորոխն Արդվինի չհասած ընդունում է Աւջի-քիլիսա լ-րից իջած Թոլ-գոմ, Սվետիբար, Վարզա, Վարաչկան, Մակրէղ, ձախից՝ Զիխիլեդ եւ Նաժուա առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը եւ մայրաները: Ապա ընդունում է Տուզլա թեփէ, Կերցին լեռներից իջած Խատիլա վտակը, որ ունի բազմաթիւ առուակներ. աջից՝ Դիդուբէ լ-ից Նակերով, Խինզարդ, Նաժվիա-նայլա, Տխեւնարդ, Կոքիդետի, Ցվատին-ցվար, Խորդամելա, Ստեփանիձէ, Սալալէտ, Բարխունարտ, Բուջուխ, Օրթանելիս. ձախից՝ Կվախիդ լ-րից՝ Օքիւզ-եաթաղ (եզնոց), Դունա գեօլ (Կոյուն-լիճ), Դուրնա գեօլ Առա, Կարտլա, Մուխրանի, Արգանետ, Շխվեն-ճալա, Ուրծումա եւ Մուսթաֆա-օղլի, որք ոռոգում են համանուն գեղերը իրենց պարագաներով: Ապա Ծորոխն առաջ գնալով ընդունում է ձախից՝ Սինկոտա առ-ը, որ ոռոգում է Սինկոտ գեղը.